



**ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2, հեռ. 060621238, 2-38, ss@ysmu.am

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 14
ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 55-րդ, 110-րդ կետերը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի գիտական խորհուրդը.

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Թբիլիսիի պետական բժշկական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Զուրաբ Վադաչկորիային շնորհել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի պատվավոր դոկտորի կոչում (22-12-14-01).
2. Հավանություն տալ 2021-2022 ուսումնական տարվա գիտական աշխատանքներին՝ համաձայն գիտության գծով պրոռեկտորի կողմից ներկայացված զեկույցի (կցվում է) (22-12-14-02).
3. Հանձնարարել գիտության գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Ենկոյանին՝
 - 1) իրականացնել աշխատանքներ մրցունակ հետազոտական և գիտակրթական ծրագրեր նախագծելու և զարգացնելու ուղղությամբ (22-12-14-03).
 - 2) «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի առաջընթացով պայմանավորված՝ ըստ անհրաժեշտության լրրվելու լրամշակել և սահմանված կարգով հաստատման ներկայացնել գիտական գործունեության ոլորտին առչվող կանոնակարգեր (22-12-14-04).



3) մշակել «ԲՈՐԲՅՆ» ուղեղի հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոնի գիտելիքի և տեխնոլոգիաների փոխանցման գրասենյակի, լաբորատոր կենդանիների հետ աշխատելու, կլինիկական փորձարկումների իրականացման կանոնակարգերի ու աշխատակարգերի նախագծերը և սահմանված կարգով ներկայացնել հաստատման (22-12-14-05).

4) մշակել և սահմանված կարգով հաստատման ներկայացնել գրագողության կանխարգելման և բացահայտման կանոնակարգի նախագիծ (22-12-14-06).

5) զարգացման և մարքեթինգի գծով պրոռեկտոր Արա Ղազարյանի հետ համատեղ՝ այլ ստորաբաժանումների ներգրավմամբ, ուսումնասիրել Times Higher Education, QS World University Rankings, Shanghai Ranking կազմակերպությունների վարկանիշավորման մեթոդաբանությունը (22-12-14-07).

3. Հաստատել ուսումնական պլանների փոփոխությունները (կցվում են) (22-12-14-08):

4. Հաստատել ռազմաթշկական ֆակուլտետի ֆակուլտետային խորհրդի կազմի փոփոխությունը (կցվում է) (22-12-14-09).

5. Հաստատել միջին և ավագ բուժանձնակազմի կատարելագործման դասընթացների ծրագրերը (կցվում է) (22-12-14-10).

6. Հաստատել 2014 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 01 որոշմամբ հաստատված «Ուսման վճարի փոխհատուցման մասին» կանոնակարգի փոփոխությունը (կցվում է) (22-12-14-11).

7. Հաստատել «Օտարերկրյա ուսանողներ ներգրավելու մասին» քաղաքականության ծրագիրը (կցվում է) (22-12-14-12).

8. Սույն որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել Համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ
Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ